ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«21» հունիսի 2019 թվականի N:79 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ ԱՄՍՎԱ ԲԵՆԶԻՆԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2019 թվականի հունիս ամսվա բենզինի չափաքանակի բաշխման և ծառայողական ավտոմեքենաների երթուղային թերթիկների լրացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ծառայողական ավտոմեքենաների վարորդներին՝

1) երթուղային թերթիկներում լրացնել՝

ա. առավոտյան կայանատեղից ծառայողական ավտոմեքենայի դուրս գալու օրը, ժամը և ցուցիչի վրա առկա վազքը,

բ. երեկոյան կայանատեղի վերադառնալու օրը, ժամը, ցուցիչի վրա առկա վազքը,

գ. օրվա ընթացքում կատարած երթուղին և հատկացված բենզինի քանակը,

2) շաբաթվա վերջում լրացված և ստորագրված երթուղային թերթիկները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Տիգրան Մինասյանին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Տիգրան Մինասյանին՝

Իրականացնել վերահսկողություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2019 թվականի հունիս ամսվա բենզինի չափաքանակի ըստ անհրաժեշտության բաշխման և ծառայողական ավտոմեքենաների երթուղային թերթիկների ամենօրյա լրացման պարտավորությունների կատարման նկատմամբ և ամփոփ տվյալները ամսվա կտրվածքով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է